

— Օրհնութեան յանուն Աւետիսի Ղուկասեան ի Տփղիս: Թ. 609:

— Յանուն Տ. Գիւտ քահանայի Աղանեան որով յայտնի զստացմանէ հաշուոյ նոր գնեալ մեքենայից վասն տպարանի Աթոռոյս առաքեալ Ս. Միւսոնի ի Վ. Պոլիս, ևս և բերեալ գրենոյ հանդուցեալ Տ. Գարեգին Եպիսկոպոսի Սրուանձտեան ի Տրաքիզոնէ: Թ. 622:

— Յանուն Տ. Սահակ քահանայի Սահակեան, միաբանի Մողնուոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհի նմա կամիլաւկայ զլիարկ: Թ. 626:

— Յանուն Տ. Գիւտ քահանայի Աղանեան, միաբանի վանաց Աւագ եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհի նմա պատիւ աւագ քահանայութեան: Թ. 652:

— Յանուն Տ. Յովհաննէս քահանայի Տ. Գապարեան Ղարարուլաղ գեղջ Ագարանայ, որով շնորհի նմա կամիլաւկայ զլիարկ: Թ. 664:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

- 1. Չին ՅԵՏԱՏԿՆՆԵՐ. (կը շարունակուի) Կ. Վ. 289
- 2. Աղքատների խնամատարութիւնը քրիստոնէութեան յաղթութիւնից յետոյ շարունակութիւն) . . . Գ. Ս. 298
- 3. Յիսուսի Քրիստոսի նորագիտ խօսքերը . . . 504
- 4 ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶՐՈՆԻԿՈՆ 504

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏԱԿԱՆ.

- 5. Հ. Գեղեցի, Համառոտութիւն Ռիզանդական կայսրների պատմութեան. . . Մ. Վ. 509
- 6. Գրախօսութիւն Ս. Վ. 515

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

- 7. Կովկասի Պետական դպրոցների հարիւրամայ կենաց համառոտ պատմ. . . Ս. Յ. 517
- 8. Օղի մարտութիւնը առողջութեան համար Ս. Յ. 519
- 9. ՄԱՆՐԱՂՈՒԹ 522

ԱԶԳԱՅԻՆ.

- 10. ԵԿԵՂԵՑԻ ԿԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ 525
- ՄԱՅՐ ԱԹՈՒ 525
- ՏԱԾԿԱՆԱՅԷ. 525

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.Բ.

- ԱՌԱՆՈՒԱԿՈՒԹԻՒՆ. 529
- ՅԱԽԵՂՈՒԿ. 550
- ՄԱՅՆՆԱՍՕՍՈՒԹԻՒՆ. 550
- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 550



ՅՈՒՆԻՈՒԹ ԵՐԵՎԱՆ 1897 Թ. ՅՈՒՆԻՍ

Ն Ե Ր Բ Ո Ղ Ե Ա Ն

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՅ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՒԱՅ.

ԱՍԱՅԵԱԿ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՍՆԱՅԻՈՅ.

Այս գեղեցիկ ներքողը արտագրել ենք մի ընտիր ձեռագրից Թիւ 1366 և ըստ Կարինեանի 1330, որի վրայ մեր ուշադրութիւնը դարձրեց զբարարանապետ Տ. Սահակ վարդապետ Ամատունին. նա գրուած է Կիլիկեան ժամանակում. Յովհաննէս արքայեղայր եպիսկոպոսի համար և մի մասը նրա ձեռքով գրեքը մեծ է (35+26 սանտիմետր) ունի 434 թուղթ, գրուած է յղկած հաստ թղթի վրայ, երկսիւն գրութեամբ, բաւական խոշոր և գեղեցիկ բոլորգրով. կաշեայ կազմը, որ անկասկած շատ հին է և գուցէ նորագուել է, ընդհանրապէս անվնաս է պահպանել ամբողջը, թէև մի երկու թերթ սկզբից և վերջից պակաս են և տեղ տեղ էլ գրութիւնը մաշուել, անընթեանի է դարձել, Ձեռագրի զլիւսուոր նիւթը՝ Յոհան Ասկերբեանի Գործոց Առաքելացի մեկնութեան թարգմանութիւնն է, զըրա հետ միասին կան մի քանի փոքրիկ գրութիւններ այս կարգով:

- 1. Թղ. 1^ա Գլխակարգութիւն մեկնութեան Գործք Առաքելացի:
- 2. Թղ. 2^ա Պատմութիւն յաղագս մատին սրբո առաքելոյն Պետրոսի և բերման ի Հռոմէ ի Հայք:
- 3. Թղ. 5^բ Երանելոյ սուրբ հաւրն Մոսկէսի Խորենացո քերթողի՝ ի սուրբ Հովիթիմեանցն գալն ի Հայս. և յաղագս սուրբ խաչին որ ի Վարազցուցաւ:
- 4. Թղ. 9^բ Մեր հրատարակելիք ներքողն է. շնորհեան պատմագրութար ասացեալ սրբազան եպիսկոպոսի և վարդապետի՝ Տէր Արապետի Սաննացոյ ի խնդրո հոմաղնեա կղբաւր ճգնաւորի՝ յաղագս վարուց և մահուան սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոբա թարգմանել և լուսաւորչիս:
- 5. Թղ. 21^ա Խաւսք Բարսղի եպիսկոպոսի Պետրոս Ապագադակեցո՝ ընդդէմ այնոցիկ որք թերացուցանեն զիսոս Որդոյն Աստուծոյ քան զՀաւրնն և ի իջուցանեն զհոգին Սուրբ ի հաղանգութիւն, և հաւասարն ընդ հաւասարութիւն արարածոց:

6. Թղ. 73^ա — 451ի վերջը պարունակում է Գործք Առաքելոցի մեկնութիւնը, և

Այս ձեռագրում պահուած մեկնութիւնը շատ մասերով զանազանուում է 1839 թ. Վենետիկում տպագրածից. երկուսի թեթեւ բաղդատուութիւնը եզրակացնել է աւելիս, որ Սոկրատի եկեղեցական պատմութեան պէս Գործք Առաքելոցի մեկնութիւնից ևս երկու տարբեր օրինակներ կան. մէկը սկզբնական յունարան և դժուար հասկանալի թարգմանութիւնն է, Թարգմանել է տուել Գրիգոր Ակայասէր կաթողիկոսը «յամին 1077» ևս Գրիգորիս որդի Գրիգորի Պահլավունայ, որորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռոյ հաւոյն իմոյ սրբոյն Գրիգորի... հալածեալ հասի...ի կայանս սրբոյն Կոստանդիանոսի... և զտի զհրաշագեղ մեկնութիւն Գործոց Առաքելոցն Մեծին Յոհաննու Ոսկեբերանի... և հանդիպեալ հմտագոյն հոետորին Կիրակոսի՝ յունական և հայկական ուսմամբ պերճացեալ, և առատաձեռն պարգեւաբեռութեամբ մեծնչալիս ոգւոյ իմոյ, Ակայասէրի աշակերտներից մէկը, անուանով դարձեալ Կիրակոս սրբագրում է մեծ զգուշութեամբ իւր անուանակցի թարգմանութիւնը. «յիշեցէք զքրիստոսագեղեց երկրորդ լուսաւորինչն մեր զԳրիգորիս զհետևող սրբոյն Գրիգորի... և զիս զբազմամեղս Կիրակոս որ բազում աշխատեցայ ի սայս, սակս անյարմար և խիրթն ի թարգմանութիւնս հոետորին յունականի որ և ջանացի յերկրել միայն. ոչ յաւելլուլ և ոչ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն, իսկ եթէ վեր ի վեր գոլով սորա այս մակացութիւն քան զմեր տեսութիւն և պակաս ինչ կամ այլ տարազ եղև, աղաչեմ չլինել մեղադիր» ք Միւսը, «որ ընդհանուր անուամբ խմբագիր կը կոչուի յՍուկեբերանէ և յՄիքիմէ քաղուած ըլլալուն համար և այս անուամբ ալ տպագրուած է ի Վենետիկ յամի 1839» ք Մեր ունեցածը առաջի թարգմանութիւնն է և գրուել է Յովհաննէս արքայեղբայր եպիսկոպոսի համար գրուած նրա՝ «ձեռամբ իմով գրեցի» և ոմն Յակոբ քրչի ձեռքով, Մինչև այժմ յայանի չէր թէ պահուած է բուն թարգմանութիւնը, որովհետև վերև առաջ բերած յիշատակարանները կան նաև խմբագրի մէջ, և Զարբանալեանը կարող էր միայն ենթադրութեամբ ասել, «հաւանական կերևայ թէ ասոր ընդարձակ մեկնութիւնն է զոր թարգմանել տուաւ Ակայասէր»:

Գտնուած է մի յիշատակարան, որի մէջ ասուած է թէ Գէորգ վարդապետ Լամբրոնացին կամ Սկեւաացին առնէր և համագոտ մեկնութիւն Գործոց Առաքելոցն ի խնդրոյ արքայեղբորն տեառն

ա. Մեկնութեան Գործոց Առաքելոց, խմբագիր արարեալ նախնաց յՍուկեբերանէ և յՄիքիմէ. ի Վենետիկ 1839»:

բ. Տես Զարք. Հայկ. Հին Դպրութիւն. էջ 580—582: Գ. Զարք. յ. տ. էջ 581:

Յովհաննէս, և ուրեմն խմբագրութիւնը կատարուել է Յովհաննէսի հրամանաւ, որի ինքնագիր օրինակը ամբողջ դարեր անկորուստ պահուելով, այսօր Մայր աթոռիս մատենադարանի ընտիր զարգերիցն է:

Թէ որ թուին է գրուել ձեռագիրը, զբարատար հաստատ ասել չենք կարող, որովհետև բազմաթիւ յիշատակարանների մէջ միայն գրողի և գրել տուողի անուններն են, թիւը չկայ, բայց զբժուար չէ մօտաւոր հաշուով այդ թիւը գտնել, Յովհաննէսը եպիսկոպոս է ձեռնադրուել 1259 թ., մօտ քսան տարի անց, նա յիշուում է բարեպիսկոս Գոնեբոյս. ք եթէ այդ տարիների միջինը վերցնենք, իսկական թուից շատ քիչ շեղուած կը լինենք. հետևապէս 1265-ից մինչև 1272:

Պարզ երևում է, որ Յովհաննէս եպիսկոպոսը Ակայասէրի մեկնութեան թարգմանութիւնից մի օրինակ իւր համար արտագրել է և ապա՝ նրա նմանութեամբ պատուիրել է Գէորգ Սկեւաացուն մի նոր խմբագիր մեկնութիւն պատրաստել, նոր խմբագրածը շուտով հոչակ է ստանում և աւելի տարածուում, որովհետև մինչդեռ առաջինից մինչև օրս միայն մի ամբողջ օրինակ և մի քանի հատուածներ են յայտնի, խմբագրուածից ձեռագրեր կան Մայր Աթոռիս մատենադարանում, Վիեննա, Վենետիկ և գուցէ նաև ուրիշ տեղեր, Թէ խմբագիրը շատ շուտ է տարածուել, այդ եզրակացնում ենք նաև նրանից, որ արդէն 1288 թուականից, խմբագրելուց գուցէ միայն տասը տասնուհինգ տարի անց, նրա մի գեղեցիկ օրինակը մեր ձեռն է հասել, զբրուած «ի վանս Յոհաննու սրբոյ Կարապետիս... հրամանաւ և արդեամբք Տէր Համազ[ասպ] գ ի թուարերութեան Հայոց 21Է» 1388 թուին:

Մեր նպատակը չէ այժմ կանգ առնել մեկնութեան կրկնաձև օրինակների վերայ, ասածներս էլ բաւական են պարզելու մի խնդիր, որ մեր զբրականութեան պատմութեան մէջ կարծիքաւոր էր թողնուած: Անցնենք Կարապետ եպիսկոպոս Սասնացոյ-ի ներբողեանին, որի աթիւ և ծանօթացանք Գործք Առաքելոցի մեկնութեան հետ: Ճառի և նրա հեղինակի մասին մեր ամբողջ ասելիքը հիմնելու ենք միայն նրա բովանդակութեան վրայ, որովհետև չունինք ուրիշ որ և է անզեկութիւն: Կարապետ եպիսկոպոսը այստեղ առաջին և միակ անգամն է յիշուում, ք «նա լաւ գիտէ իւր դարու

ա. Տես Զարք. էջ 582—700:

բ. Տես Յ Տաշեան, Յուգ. Հայ. 2եռ. Մատ. Միթար. ի Վիեննա. էջ 625 և Սիշան 144—147:

գ. Այս այն Համազասպ եպիսկոպոսն է, որի ժամանակ ծաղկեց Կարբիի մօտ Յոսանաւանքը և որի համար գրուել են շատ ծնագրեր. ի մէջի այլոց Մեծ Սոկրատոց: Դրա մասին տես իմ Սոկրատի հրատ. էջ 104—107:

դ. Զարք. յ. տ. էջ 758. Է. Զարբանալեանը առանց այլեւայլութեան «Մամացի»-ն դարձրել է «Մասունցի», գուցէ հիմնաւոր պատճառաւ, մեզ յայտնի չէ:

Հայերէնը և յայտնի դպրոցի մէջ լաւ կրթութիւն ստացած մէկն է. ճառը գրուած է հաստատուն, յատուկ սովորած ծրագրով նման այն ճառերին, որ գրուել են Թ.Ա. դարից սկսած և որոնց նմուշները հրատարակուած են «Մոսկոյի» Հայկականի» մէջ, Կարապետ եպիսկոպոսը վերնագրի մէջ կոչուում է «Մասնացի» մենք էլ տրամադիր ենք Հ. Չարքանալեանի հետ «Մասնացի» համարել նրան, առաջի ձևը ժողովրդական ընդունելով, ճառը գրել է «ի խնդրո համադրեալ եղբար ճգնաւորի» բայց թէ ով էր և որտեղացի էր այդ ճգնաւորը, ոչինչ չգիտենք. միայն մի հանգամանք կարող էր յօգուտ վերելի բացատրութեան ծառայել. Կարապետը խօսելով Մետրոպի հայրենիքի՝ Տարոնի մասին, այնպէս ճիշտ և ուղիղ կերպով է նկարագրում այդ նահանգի յատկութիւնները, որ երկրին անձանօթ մէկը չէր կարող իմանալ. մինչդեռ իբրև Մասնացի քանի քանի անգամ այցելած կը լինէր Մշոյ գեղեցիկ գաշտը և սքանչացած նրա պտղաբերութեամբ, օդի քաղցրութեամբ, երկրի գեղեցիկութեամբ:

Կարապետի ներքողը չէ կարող մեզ համար պատմական աղբիւր ծառայել, նա նոր բան չէ յայտնում. զուտ պատմական մասը առել է ամենից շատ Մովսէս Խորենացուց, մասամբ Կորիւնից և ունի նմանութիւն Վարդան վարդապետի հետ. և մենք հրատարակելով՝ այդ ի նկատի չունենինք, այլ որովհետև դա Թ.Ա.-րդ դարից սկսած շատ մշակուած և շատ սիրուած որոշ գրական ճիւղի արտայայտութիւն է, իւր տեսակում լաւ օրինակ է համարուել և բացի այդ յիշեալ շրջանի ուշագրաւ և հարուստ լեզուական արտագրութիւն է. Թէ այդ ճառը իւր ժամանակին փափաքելի գրուածք էր և հետեւապէս նոյն շրջանի գրական ճաշակի փայլուն արտայայտիչներինց է, այդ իմանում ենք Յովհաննէս եպիսկոպոսի ճառի վերջում գրած ինքնագիր յիշատակարանինց. «զի յոյժ փափաքմամբ ետու բերել զսա ի Հոռոմկաէն, զի չկայր յերկիրս. և ես ձեռամբ իմով գրեցի ի յոյժ վշտալիր աւուրս»:

Վարդան պատմագիրը Հայոց տառերի դիւտի մասին մի քանի մանրամասնութիւններ ունի, որ չկան հինգերորդ դարու հեղինակների մօտ, օր. թէ Դանիէլեան գրիւրը 22 էին և թէ գիւտը կղել է «ի լեառն Բալուայ», նոյնն ունի նաև մեր ճառի հեղինակը, աւելի մանրամասն, ա Վարդանը իւր պատմութիւնը վերջացրել է 1265 թ. յ մօտաօրակէս այն ժամանակները, երբ գրուել է մեր ձեռագիրը, և երբ Կարապետ եպիսկոպոսի ճառը արգէն հռչակուած էր. հետեւապէս կամ Վարդանն է ճառից օգտուել, կամ երկուսն էլ ընդհանուր աղբիւր են ունեցել:

Ճառի գրուելու թուականը յայտնի չէ, բայց

ա. Տես քննգիրը եւ իւր համապատասխան ծանօթութիւնը
բ. Տես Չարք. Հայկ. չին Դպրութիւն էջ 719 (1886):

նրա լեզուն մեզ միջոց է տալիս կանգ առնելու Թ.Ա. և Թ.Վ.-րդ դարերի վրայ, աւելի հին դժուար թէ գրուած լինի, իսկ վերջի սահմանը ձեռագրի գրչուութեան թուականն է 1265—1272, Մեր ենթագրութիւնը հաստատուելու համար առաջ կրերնք մի շարք բառեր, քերականական տարբերութիւններ, որ յատուկ են այդ և աւելի ուշ դարերի և միայն այդ դարերի հեղինակների մօտ են գործածական, ինչպէս են. «համայնի», «մակաւասուր», «համաքատակիր», «ծիծա», «յերկնամիջակ», «արտապինդ», «բարեաւ մնալ ասացեալ», «խիզան», «հարիֆ», «շաւուշ», «ներշրջակա», ևլն այս բառերը գտնուում ենք Գրիգոր Մագիստրոսի, Նշեցու, Երզնկացու, Սկեւոացու մօտ, ժամանակն ապացուցանող մի ուրիշ, և այն էլ շատ կարևոր փաստն է հնչիւնական ուղղագրութեան հետեւողութիւնը, որ այդ դարերում մրտաւ. բառերի միջում և վերջում չհնչուող «յ»-երը չեն գրուել, իսկ երբ ելաւ պարզ «չ»-ի ձայն ունէր, գրուել է «ըւ», օր. վասն որո, ի ներքո, երեսնամեայ տեսու սեղանու դիտելու ծառաի, աւգախնքն, արքաին, մնաին, հաերէն ևլն տըւաւ, նըւաճէին, լըւացեալ, նըւաղ, խըւէր, թըւէր, քըբըւէին, Նիւնըւէացիքն, անսըւաղ, պատըւի ևլն, թէև պէտք ասած աւելի շատ անգամ պահուած է սովորական հին ուղղագրութիւնը:

Այսպէս ուրեմն ճառի գրուելու ժամանակն ստացուում է տասներկուերորդ դարը, կամ տասներեքի սկիզբը, Կարապետ եպիսկոպոսը ցոյց է տուել իւր բոլոր հմտութիւնը Հայոց բառագիտութեան մէջ. նրա գրուածքը ներկայացնում է բառախաղութեան և բառերի կուտակութեան մի խառնուածք, որի մէջ մտքերը զօհուել են այդ նպատակին, Բացի ուսմական բառերից և դարձուածներինց, նա ունի բաւական թուով հին գեղեցիկ բառեր, որ չկան Նոր Հայկազեան բառգրքում (Վենետիկ 1837), որոնք ծանօթութիւնների մէջ նշանակել ենք:

Յովհաննէս արքայեղբայր եպիսկոպոսի ձեռագիրը գրուած է մեծ խնամքով, հաստատուն կէտագրութեամբ, շեշտերով և առանձին ուղղագրութեամբ, որը մենք նպատակայարմար գտանք անփոփոխ թողնել, որովհետև ճառի ամենագլխաւոր արժանիքը նրա լեզուական առանձնայատկութիւններն են, Միայն բաց ենք թողել շեշտերը, կէտագրութեան մէջ, ի տեղ գրել ենք, ՚, երբ առաջինը վերջակէտի նշանակութիւն չունէր, Ձեռագրի որևէ բառի փոփոխութիւնը նշանակուած է ծանօթութեան մէջ. ձեռագրի լուսանցքում գրուած են քննարկի դժուար բառերի հոմանիշ բառեր, երբեմն էլ Հասկացած բառը ստորագծուել է. այդ էլ ենք մտցրել ծանօթութիւնների մէջ:

Մեղրուպ Վարդապետ.

Ներքոյն պատմագրաբար ասացեալ Սբբազան եպիսկոպոսի եւ վարդապետի կաթապետի Մասնացւոյ ի խնդրոյ համարեալ եղբարք ճգնաւորի. Յաղագս վարուց եւ մահուան Սբբբ եւ երջանիկ վարդապետին Մեծորդայ ա թարգմանչի եւ լուսաւորչի:

Անձուկ բաղձանաց¹ ճշմարիտ սիրոյ քո ձմիկ գսիրա իմի եւ դուք գորովոյ՞ գեւու զազիս իմ: Եւ ի վեր քան զընութիւն բնաւից՝ կենցաղ կենաց քոյ՝ պատկառեցուցանէ զիս հնազանդել եւ ընուլ զտենչումն ըղձանաց անձին քո՝ իրագործել ի վեր քան զկար մեր: Որպէս զՈստոնն եւ Փալտոսն՝ զնելով զՈսիա՞ ի վերա Ոլոմպիոսի եւ զԲիլոն անբեւաշարժ յանելանելին ելանել՝² խաւսել զբուստ սակս հոմազնոյն՝ ո մարդ Աստուծոյ:

Բայց թէ տացես ի սատար զիղձս քոյ ինել մակոյկ մտաց իմոց եւ խլել ի տղմոյ՞ ախրութեան կենցաղոյս, թեւակոխել թեթեարար ի խորս իմաստից, վերաբերել ահունս պատուականս եւ մարգարիտս գեղեցիկս. ես ե ոսկի սափիրա զի դիցուք ի շամիրակի՞* ներբողելոյս ի մէջ՝ Ոչ որպէս թէ կարաւտէ կատարեալն՝ այսմ ընծաի եւ կամ փառաւորի փառաւորեալն այսու փառաք. զի զի՞նչ երբեք մեր հոծեալ աթրութայս՝ առ զերազոյն հանձարն: Եւ զի կարծի յոմանց յաւելուած սրտի եւ յաւժարութեան ողոյ՞ շարադրութեան առնել յիտ քաջ քարտողարացն. սա-

ա. 260. Մեծորդայ:

բ. 2. գորովո:

գ. 2. ըզզոսիա:

դ. 2. տղմո:

* Լուսանցքում էրբեւ մեկնութիւն — „պսակի“:

1. Տ. Ներք. յորդոս եւ ի թողոմս ս. Լուսաւ. (Մով. Հայկ. հատ. Ժ. էջ 5. Բաղձանց սրտի իմոյ բորբոքի ...) սկսում է համարեա նոյն բաներով եւ նոյն ձեւերով շարունակ:

2. Տ. Գաւթ առյաղթ. սահմանք իմաստ. էջ 194 (տպագ. Վննւ. 1855) „Ձորս առակելով քերթութիւնն վասն Ոսոսի եւ Ծփի առոսսի որք զՈսա զեւտնն ի վերայ Ողիմպիոսի յօժարեցան զնել՝ եւ ի վերայ Ոսայ զտեղեւաշարժն Բիլոնն, որպէս զե կրկնն ծնմարան եղիցի“: Նմանութիւնը ակնբեր է եւ հետաքրքիր նրանով, որ առաջ է ըբերուած փոփոխութիւններով այն էլ անուանց մէջ, ժարտասանական յատուկ սովորած պատկեր է, որ կարող են երկու հեղինակները միմեանքից անկախ, ընդհանուր աղբիւրից առած լինել: Նոյնը կայ եւ Գրիգոր Մագիստրոսի թղ. ին. Տես Ն. Հայկ. Բառ. „Տերեւաշարժ“:

5. Այս բառը գործ են անում Խոր. եւ Լազ Փարփ. Մեծորդի մասին, բայց գրում են „աթութայս“:

կայն նոցայն պատմութիւն է եւ ոչ գովութիւն: Եւ հաւատամ թէ որ ընկալաւ զնոցատաղանդն՝ ոչ առնէ անտես եւ զմեր խերեւէչս զոր պատշաճ վարկաք, անտեղի գոյ՝ ոչ սալ շնորհս շնորհողին, եւ ոչ գոհանալ զանկարական պարգեւէն, որ տըւաւ եկեղեցւոյ միջնորդութեամբ սորա:

Բայց անգերիմ ի յո՞ճ կարգիս որո՞ւմ ուղղելիցիլ ներքնոց թէ արտաքնոց, հոգեւորիս թէ մարմնաւորիսն. եւ ճահ վարկանիմ համայնիւ յարմարել զշինուած հոմերական տաղիս, որքան եւ ընձեռէ մեզ իմաստութիւն իմաստն եւ բանն՝ բան, եւ հոգին՝ հոգի, զի ծանկայց թէ որ զոն հաւացայց՝ ի սեռէն կամ ի վայրէն, յիրէն թէ յարհեստէն: Բանզի գովելի եւ գեղեցիկ են համայն եւ յոլովից ըղձալի եւ տարփալի: Եւ զի թէ միովն միայն էր բարգաւաճեալ, բաւական էր ընդարմացուցանել զբնաւս եւ զերազանցել քան զիմաստըս իմաստից անմարմնոց եւ մարմնականաց: Եւ արդ՝ յազուշ կըրթեալ իմ անգիտանալով զորոյ բուռն հարկանել ի քառիցս, զի վեհագոյնք են միմեանց եւ զերազանց ի բնաւից էից: Իւրաքանչիւր յիւրում սեռին՝ եւ տեսակին մակաւասարէ անհամեմատ եւ ոչ ումք երեւցաւ այսպէս ունել զսոսա գեղեցիկ՝ ի սկսմանէ աւուրց մինչեւ ցայսօր:

Սակայն սկսայց ի սկզբբանէն եւ ի սեռականագոյն սեռէն՝ թէպէտ [[թղ. 98] եւ ակներե է համայնից ազանց, քանզի ո՞ է այնպիսի խաւ եւ շամբուշ՞ եւ զսչացու որ անբաժ է յազգմանէ նշուից լուսոյ սորա: Բանզի սերէ յԱրեղի՞՝ զեղեցիկ նահապետին՝ բնակչաց Եւրոպիո եւ կիսո-ասիական վայրին, որոյ ընդարձակեաց տէր եւ բազմութիւն ազգաց եւ ազանց սերեաց ի նմանէ՝ մինչեւ նեղիլ վիճակինորա եւ զեզանիլ յարկի հարազատին իւրոյ.՞ հատուցումն ընկալեալ փութանակի՞ արդարոյն:

Ի ե թոռն թորգոմեան. եւ ազն Ազգանագեան. Տնուեղ Հայկեան՝ հաւուն հայկա-

ա. Անսովոր եւ անասկանալի բառ է: 260. մէջ ընագծած է, երբեում է նստմս էլ շնն հասկացել:

բ. „Շամբազոնս եւ յոյժ խօլ է“ Տես Փիլոն՝ Ալաբ. Մթ. գործ:

գ. 260. Իրո զ. 260. „քաթանակի“, անկասկած աղաւաղուած է. իրբեւ անասկանալի բառ ընդգծուած է:

4. Տ. Մ. Խորան. Գ. Ա. զլ. ԺԲ:

զեան: Սոսյատականն¹ և քաջադանգրին, զեղա-
 զէշին, անձնէին և հաստարագիին, որ խորխո-
 տայր ընդդէմ հղաւրին և զիւցազանցն յող-
 թէր: Որ շինող և ոստիկան էր աշխարհաշէն
 և երկնաբերձ բրգանն. և ի քակման նորա՝
 առնողը իսաքար զսեփական բարբառս և հա-
 մագումար ախիւ զիմեալ զայր հասանէր
 յերկիր գէր և պարարտ. որոյ անուամբ ձեա-
 նա բնակս բնակիչքս և բարբառս: Ուր զվեշ-
 տասան և զվեց կանկնեան շնչաւոր բլուրն՝
 զանձոռնի հասակն և զվիթխարի հսկայն,
 զտրմարդի տիտանն զուզնաքեա զինիւ հար-
 թայտակ տապալէր:² Երբմէ ասնն սկսանել
 արուեստին ի վերուստ վարդապետեալ, զի որ
 բազաւագ³ եղեն զործոյն, անուամբ նորա
 կոչին մինչև ցայսաւր:

Եւս և յերանաց Արմանեկայ և յարմատոյն
 Արամս տիեզերակալ քաջին, որ զՍիւքար
 զարինախանձ գազանն ըմբռնեաց,⁵ իբրև
 զձագ մի շոկատ, և երկաթ վարեալ ի ծա-
 կատին՝ սեւեռէր ի կատար բարձրագոյն աշտա-
 րակին դէմ յանդիման խուժաղուժ ազգին:
 Սակս որո պակուցեալ արեւելացն՝ ի հարկա-
 տըրութիւն և ի ծառայութիւն նըւածէին,
 և մարգարտաշար վարսակալաք պսակէին:

Որ և զմեծ վիրազն և զապականիչ գոռոզն
 Բարշամ, քառարիւր գնդաւ և կիսարիւր հաս-
 քամը⁴ հալածական վարէր ընդ կորզըւիս և
 զհսկայասերն՝ առաթուր սատակեր. և Ասո-
 րոց աստուած ընծայէր և հաւասարէր զհա-
 րաւայինսն ընդ հարկաւ:

Դադարէր յարեմուտս և զՊապիս Բալա
 տիտանեան, զբռնակալն ուղկիանու և պոնտ-
 ոյ վտարէր յանրնակ կղզիս.⁵ և ինքն պեր-
 ձացեալ խանդարէ զբանս աղպաց և զիւրն ճո-
 խացուցանէ խաւսել միայն: Երոյ անուն յոր-

Չորջեն զազգըս մեր՝ Եոյնք և Բաղդեայք դեռ
 ևս և Մշակ նորա շինէ զկեսարիայ:

Եւ զի՛նչ ասացից զարքայիցն տասանց՝
 սկսեալ ի Պարոյրէ, պսակեալ ի Վարբակա
 թագաւորէ, Մարա,¹ որոնիզակակըցեալ բառ-
 նս. զարքայութիւնն ի Սարգանապաւլայ: Եւ
 Հրաչէ² զարմանագեղ զաւակ նորա՝ լնու զմար-
 զարէութիւն յԵրեմիաս որո տալով ի Պաղես-
 տին և գերի ածէ զԵիսայածին³ ճաղկն թա-
 գադիր թագաւորաց: Սոյնպէս և այլքն ամե-
 նայն՝ որդի ի հաւրէ առեալ արքայութիւն սեփ-
 հական, մինչև ի կարմրատիպն և ի զեղձնա-
 հերն, ի քաջացն քաջն և ի [[ԹՊ. 10^ա]] յարեաց
 արին, յանվանելին և յանպարտելին ի տիեզե-
 րակալն Տիգրան: Այն որ թագն էր թագաւորաց
 և պսակ պըսակաւորաց, հսկա հսկայից, և
 արքա արքայից, յորմէ սարսէին սաքրէին հա-
 մատարած տիեզերք, և թագաւորք և իշխանք
 յերկիր անդեալ մոխրաթաւալ զիմաւք զհող
 լիզուին. և մարմնաւորք և անմարմինք տըռ-
 փէին ի գեղ երեսաց նորա և իմաստունք ա-
 մանակին զարմանալին վասն տնաւրէնութեան
 գերագոյն դոյին: Հի՛մ ոչ եղև յաւուրս սորա:
 Որք մոռանան թէ՛նա ոչ եկն ի խրախութիւն
 և ոչ առնուլ պաշտաւն կամ փառս, այլ
 պաշտել և տալ զանձն փրկանս. սակս որո
 սաստէր Սիմոնի կամողին զկամս նորա:

Եւ զի թէ զբովանդակ զործառնութեան
 նախնեաց երանելոյն զյաղթութիւնն և ըզ-
 զաւրութիւնն, զբարձրամտութիւնն և զհե-
 զութիւնն, զպատիւն և զզարկեշտութիւնն,
 զբնաւն ջանամք մատենագիծ^ա շարել, ոչ բա-
 ւէ քարտ և մելան: Եւ զի արամախոհացն՝
 խուսն է ընտրելի և բաւական յիմաստ
 սակայն զայս գուզնաքեա յիշումն նախ-
 նեացն տրիտուր հատուցաք: Արմատոյն բա-
 րեաց վայրենի իւղինեացն և յամրածաղիկ^բ
 արմաւենեացն, որ յետ հոլովից սահելո՞ շա-

ա. գործածական է. քաղյաւ:
 բ. Աստուղոր քառ է, չկայ Ն. Հ. Բ:
 1. Խոր. Գ. Ա. գլ. Ժ:
 2. Խոր. Գ. Ա. գլ. ԺԱ:
 3. Խոր. Գ. Ա. գլ. ԺԳ. եւ ԺԴ:
 4. Խոր. „չորիք քիւրովք վանելովք նետեակօք
 եւ հննգ հազար նեծեւլազօրոք“:
 5. Խոր. Ա. գլ. ԺԴ. Պայապիս Բաղեայ տիտանեան
 որ բռնացեալ զՊոնդոն եւ զՈվկիանու վանէ...
 Ի կղզի ինչ ասիական ժողովս ...

ա. Չկայ Ն. Հ. Բ.:
 բ. Ն. Հ. Բ. չկայ
 1. Տես Խոր. Ա. գլ. ԽԱ. Ի Վարբակայ Մարէ:
 2. Նոյն գլ. ԽԲ:
 3. Եիսայածին է կոչում Բագրատունիներին նետեա-
 լով Մ. Խորեն. Պատ. առ Մահակ Արծրունի, ուր առաջ է
 բերուած Դաւթի ծննդաբանութիւնը, իսկ Բագրատի մասին
 ասած է. „Եւ Բագրատունոյր ասեմ. եթէ թագաւորք Ե
 քէն ելցեն, եւ թագաւորք Ի Դունն“:

լինց՝ ընծիւղեցին շառաւել բարիս և ուղեշ լի քաղցրաձաշակ պտղաւք՝ այն ինչ ծնելոյ դըստէր Սիոմբի:

Այլ և ոչ անտես արասցուք զերկիր ծընընդեան նորա, որ է զիրկ և զոգ՝ աշխարհին Հայոց, ծըծին և ծոցոյն ասիական մասինն. քառորդ սահմանեալ նահանկ, հարթայատակ վայր՝ շուրջանակի պարագայծ՝ ա պարփակեալ լերամբ՝ սոսոքելով ի վերուստ և ի ներքուստ՝ Պիսիդոն ըստ կամաց պատրաստեալ ժառանգութեան նորա: Ետմէ զովացեալ Արտեմիս, վերընծիւղէ խոտս և զալարիս, զանաղանս և աղզի ազգիս, երանկ երանկ և բազմագունակ ծաղիկս՝ և ախաահալած արմատս: Իսկ և Հերաս հանդարտագոյն հնչէ յերկնամիջակ կիսին, և Հեփեսոս ոչ զաւրանա ի ժամադիտակին յաւէտ: Սակս որս սերմանեալքն ի նմա բերբարագատիկ արդիւնանան, և ծարակեալ խաշանց և անդէոց և զերացեալ ստուարանան, զի որ բուծցէ անդ երինջ մի յարջառոց կամ մաքիս երկուս, ըստ տեսանողին բանի ի յորդութենէ կըթին կերիցէ իւր. զի իւր և մեղր կերիցեն ամենայն բնակեալքն ի նմա:

Եւ լերինք լի են եղջերուաք, և վեմքն նապաստակաւք, և ընդ մէջ նորա գնան ջուրք. յոլովեն ծառք և մայրք ձագասնունդ թուրնոց՝ և բոյնք տառեղանց՝ ապաւէն նոցա: Այլ և համահաւասարէ Արեհնա, դրաստին Արամազա՝ և զաշտին Ելեսինա, քանզի վայր է փափկութեան ըստ աւրինադրին երզոյ. և ի սմանէ բըղինն երկու ակունք Տիգրիս և Մփրատէս, որպէս Եորդ և Դան ի Սանիրա և յԱհերմոնէ, և յառաջ խաղալով՝ աւձաձև գալարմամբ, վէտ ի վէտ և պատ ի պատ[[թղ. 10^բ]] ձաւձին ձեմին ծիծաղին ծաւալին պատառելով զլերինս և հատանելով զտաշտս. և պար առեալ պատեն զԱսորիս, միաւորեալ ի Տեսրոն, ծնանի արս զիւցազունս, քաջս և կորովիս, մենամարտիկս անվանելիս: Հանէ հաց սրտապինդ և զինի ուրախարար, ևս և իւր զուարթացուցիչ, երիւարս արազաքայլ, և եզն արաւրածիլ:

Իսկ անախտութեամբն և առողջութեամբն

վեհագոյն է, զոր կարծեմ վասն զանազան ծաղկանցն և զաւրաւոր արմատոցն լինելի և կամ յաղաքս Արեհնահոս առուցն: Բանզի որ բընակեալ են զափամբ նոցա՝ դեղ կենաց ասեն ըմբողացն գնա ոչ զորով ի նոսա մահ տարածամ, զի որ հարիւրամեան վախճանեցի ըստ բանին Եսայեա յորջարջեցի: Սակս որս մարդաշատեալ և բազմացեալ գեղք մեծամեծք, յորոց մի է և իմ պսակաւորիս երկըրորդ Բեղլահէմս նա տուն հացի և սահացիս ի նմանէ Դաւիթ շառաւել Եսսեայ, և ի սմանէ Մեսրոր ծաղիկ ի Վարդանա, անտի տեսանող՝ և աստի տեսանող, նմա ծնունդ հացն կենաց մահահալածն կերողաց, և ի սրմոս ծընունդ՝ կերակրողն դրանն կենաց, նմա պատճառ անունաւորութեան՝ ճաշակումն հացին Իսրայէլի՝ յետ սզոյ կենաց կողին է, և սմա բաղաւզ Սոյի նախապետին յետ հարուածոյ համատարած հեղեղին. թէև բաջաղի Ղուփ պիտորոս ի Տարբանա կոչիլ Տարաւն Հացիք և Յրաւնք,¹ բայց մեք ճշմարտութեանն հետեւացուք և ճանապարհ զարքունի գնասցուք: Այլ և բաւականէ բարգաւաձանք վայրին բընակ լինել հոգեւոր հաւուն և անշիջանելի լուսոյն. քանզի զկնի ձեռնաւորելոյն՝ նախ ի սմա զայր, և յետ զառնալոյն ի Հոսովմոյ² և սկիզբն առնէր զործոյն Տեառն. քակէր զկուռս՝ և քանդէր զմեհեանս և փոխանակ նոցա շինէր եկեղեցիս և շուրջանակի վանորայս և ծածկէր ի նոսա զգանձս աստուածայինս, և սեփական բնակութիւն ինքեան և զարմից իւրոց ստանայր յաւերժակայ: Ետաղաքս որս հայցէր ի տեառնէ. ոչ մտանել ի նմա դանդաշմունս այլանդակս, և աղանդս աւտարտախա: Եւ զի անուանի էր գեղ ծնընտեան երանելոյս, վասն այնորիկ ի սմանէ առնոյր սուրբն Թուսիկ ամուսին որդոց իւրոց:³ Եւ թէ զուցէ ասասցէ որ փոքրիկութիւն զոլ՝ ոչ լինել ի

1. Տես. Եսայ. գլ. ԿԵ. 20:
2. Եոր. գր. Ա. գլ. 2. Ուղմախաղորոս ասաց. « Իսկ ի կրտսերագունից որդոցն նորա (Զսիսութեան) Տարբան անուն. մեկնեալ ի հորն, բնակէ անդէն ի նոյն գետն-գերբն, յորոց անուն եւ զգաւառն անուանէ Տարբոս, եւ զանուն տեղոյն որ բնակեցան՝ կոչէ Յրոսս. »
3. Ագաթ. էջ 469 գլ. ԾԺԳ (հրատ. Թիֆլիս. 1885)
4. Փաստ. (Գ. դար. գլ. ԺԵ) Թուսիկ որդոց ամուսնութեան մասին ասում է. « Եւ առնն եւս իւրեանց կանայս »

քաղաքէ այլ յաւանէ, գրագումն ի դերագունիցն ունի համաքատակ իւր ի գեղջէ գողով: Մախ զսիրեցեալն Աստուծոյ գրաւականն ձեռամբ * որպէս ասացաւ Բեղլահեմացի և զՆդիա Թեղրացի, զՆիդիսէոս Դիւմկացի, զՄիքիաս Մորլստացի և զՆաոււմ Եղկեսացի, Սամուէլ Յարեմացի, Երեմիաս Անաթովթացի և կարծեալ սինքն Սիոնի՝ Բեղասիրացի և ինքն Աստուածն և տէրն կոչէր Մաղաւրացի: Այսպէս և Մաշտոց երանելի ծնեալ ի Հացիս ի բարիոք և ի հաւատացեալ ծնողաց, և զարդացեալ հասակաւ վարժէր կրթութեամբ զրոց՝ պարսից յունաց և ասորոց՝ տառիքն: Եւ սակաւ ինչ հմտացեալ [[Թղ. 11 ր] յիւրում նահանկին, և ապա հրաժարեալ անտի և բարեաւ մնալ ասացեալ ամենայն կենցաղական հոգւոց, և ընթացեալ զարադէմ և ստանալով զարհեստ արհեստաւորաց և զիմաստս իմաստնոց, և բովանդակեալ վեց մասամբ զբոլորն իմաստ, այլ և զմերս իսկ և փարթամացեալ համայնիւ աստուածայնով և ներշնչականաւ: Այս են նահանկք, նախնիք, ծնողք, սրնունդ և արհեստ սրբոյս:

Բայց կարծեմ ստերիւրեցա յոճոյն, և զարտաւղի ելա ի կարգէն այսպիսեալք բարգաւաճել զսուրբս: Սորա գաւառն յիրկինս է, քաղաքն և տաճարն, որոյ ճարտարապետ Յիսուս է, որոյ և աչք տեսոն Աստուծոյ ի վերա նորտ ի սկզբանէ տարւոյն մինչև ցիատարումն տարւոյն, որ կենդանեացն է վայր՝ և զմեղաք մեռեալս ոչ ընդունի. անայլալակն և անորակն, անխռոմն և անխախտան, և զիարպն և որպէսն՝ անհետագաւանի է, որքան ի կապ կանք ընդ կաւիս: Ուր շտեմարանն է փառաց և պսակի սրբոցն, որ և զաղափարն անտես էական և անլուր ունկան և անանկ սրտի ճշմարիտ գաւառ, որ ոչ փոխէ գրնակիչս և յայլո՝ յայլ անցուցանէ զստացուածն:

այլ մշանջնեաւոր է ունաւղին և յաւերժակ ստացաւղին, ուր աղքատքն ճոխանան, և սրգաւորքն ուրախանան, հեղքն բարձրանան և քաղցեալքն յագենան, որորմածքն պրսակին և սուրբքն սրտիք տեսանեն զԱստուած, խաղաղարարքն որդիանան և հալածեալքն և նախատեալքն զանասելի բարիսն ժառանգեն: Այն է ստուգապէս գաւառ, և ո՞վ է յիմար՛ եթէ ոչ որ զայն զիտէ և աստ ստանայ ինչս և ստացուածս, ապարանս և անդաստանս, պայուասկաւ և կերպասս, յաւտարս և յանկայունս՝ ի խիզանս և յանիրաւս, ի գողութս և ի ցեցութս, և յարատաւոր կարասս: Անդ շինեսցուք և մթերեսցուք ուր ոչ գոյ երկեան, տիրանք և տիրութիւն, ոչ ճերանալ և ոչ զարդաշիլ, այլ երիտասարդք միշտ անտըրտում և անվրդով, ի ցնծութիւն և ի խրախուժիւն, ի զինարբուս և ի հրճբանս յախտենական: Անդ ուր կոչնատեր և հարիճ է հայրն համայնից և մատուակ՝ որդին միածին, և բաժակ հոգին ճշմարիտ, խրախակից իննեակ դասուց բոցանիւթ բանակացն, և դոնարաց վեմն անվանելի, Ընգարձակ է վայրն և առազասան, և բազում են աթոռքն և աւթեանքըն, և զամենեսեան կոչէ կոչնատերն՝ եկայք յոժարութեամբ, սակայն լրացեալ պատմութանաւ հարստեաց հանդերձիւ: Եւ եթէ սիրող ես տաճարի և անաստանի, անդ ստացիր ի սեփհական հայրենիսն, բազում է վաճառոյն և առատ, ոչ ըստ արժանաւորութեան է արժէքն այլ ըստ կարին և ըստ կամացն, զի բիւր տաղանդն և մի բնիոնն, հաւասար ստանան:

(Կր շարունակաի)



*. Լուս. «Չճաւիթ»:
 զքոս Թագաւորին . . . անուանց կանանց նոցա, անուն կնոջն Պապայ՝ Վարազդուիտ . . . անուն կնոջն Աթանագինի Բամբիչն, ի սոցանէ ծնաւ այր սքանչելի եւ զարմանալի Ներսէս . . . Իսկ Դորմնացին ոչինչ չի յիշում:

1. Կորինը եւ Փարփ. յիշում են, որ Մնարալը վարժ էր մեայն յոյն դպրութեան մէջ. «ի մանկութեան դիմս վարժեալ Կենտրոնական դպրութեամբ»:

ա. Զեռ. պայուասիկ. ունի Ան. Երեակ կռի մտքով, քայց իսկապէս չէ բացատրուած: